

Հաստատված է

**ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2017թ. հոկտեմբերի 28 - ի թիվ 27 նիստում
ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ _____ Ս.Ա. Առաքելյան**

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱԼՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգով սահմանվում է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի (Այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման կարգն ու պայմանները, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների նկարագրությունը:

2. Սույն ընթացակարգի ընդունման իրավական հիմքեր են՝ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրությունը և ԵՊՀ ԻՄ ներքին իրավական ակտերը:

3. ԵՊՀ ԻՄ-ում պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների տեղակալումն իրականացվում է բաց մրցութային ընտրության միջոցով՝ մինչև 5 տարի ժամկետով:

II. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԱՌԱՋԱՂԻՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

4. ԵՊՀ ԻՄ-ում սահմանվում են պրոֆեսորադասախոսական համակազմի հետևյալ տարակարգերը՝ պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս:

5. Պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների տեղակալման չափանիշներն են՝

ա) պաշտոնի հավակնորդի բարձրագույն և/կամ հետբուհական մասնագիտական կրթության որակավորումը, գիտական աստիճանը, կոչումը,

բ) մասնագիտական և մանկավարժական պահանջվող հմտությունները,

գ) գիտահետազոտական գործունեության արդյունքները,

դ) որակավորման բարձրացումը և վերաորակավորումը,

ե) ուսանողական հարցման միջոցով դասախոսի գնահատման արդյունքները (առկայության դեպքում),

զ) դասախոսի աշխատանքի գնահատման այլ ձևաչափերը (ինքնագնահատում, գործընկեր դասախոսների և անմիջական ղեկավարի կողմից գնահատում) (առկայության դեպքում):

6. Պրոֆեսորի թափուր պաշտոնին կարող են հավակնել պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձինք:

6.1 Պրոֆեսորի թափուր պաշտոնին կարող են հավակնել նաև.

ա) գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցող անձինք, ովքեր՝ ունեն գիտական կոչում շնորհող բուհում առնվազն 3 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ, վերջին 3 տարվա ընթացքում այդ բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և դոկտորական ատենախոսություն պաշտպանելուց հետո ունեն տվյալ բնագավառում 3-ից ավելի հրատարակված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանքներ (այդ թվում՝ միջազգային գիտական ամսագրում տպագրված հոդված՝ բացառությամբ հայագիտական բնույթի աշխատանքների), ղեկավարել են պաշտպանած ատենախոսություն կամ հեղինակ են նախարարության կողմից երաշխավորված դասագրքի՝ առանց համահեղինակների, կամ առնվազն 2 դասագրքի՝ համահեղինակներով, առնվազն վերջին մեկ տարին աշխատում են գիտական կոչում շնորհող բուհում կամ կազմակերպությունում և 3 պաշտպանած ատենախոսության գիտական ղեկավար են, այդ թվում՝ առնվազն 2- ի՝ միանձնյա,

բ) գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձինք, ովքեր՝ ունեն դոցենտի կոչում և գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 20 տարվա ստաժ, վերջին 5 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն, ունեն հրատարակված մենագրություն բուհի կամ կազմակերպության գիտական խորհուրդների կողմից երաշխավորված, կամ նախարարության կողմից երաշխավորված՝ հրատարակված դասագիրք՝ առանց համահեղինակների, կամ 2 դասագիրք՝ համահեղինակներով, և առնվազն 20 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք տվյալ բնագավառում, այդ թվում՝ վերջին 5 տարվա ընթացքում՝ 2 աշխատանք և 2 պաշտպանած ատենախոսության ղեկավար են, առնվազն վերջին մեկ տարին աշխատում են գիտական կոչում շնորհող բուհում կամ կազմակերպությունում, առնվազն 3 պաշտպանած ատենախոսության գիտական ղեկավար են, ունեն մենագրություն կամ նախարարության կողմից երաշխավորված՝ հրատարակված դասագիրք՝ առանց համահեղինակների, կամ 2 դասագիրք՝ համահեղինակներով, և տվյալ բնագավառում առնվազն 15 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք, այդ թվում՝ վերջին 5 տարվա ընթացքում՝ 2 աշխատանք, որոնցից առնվազն մեկը՝ միջազգային գիտական ամսագրում բացառությամբ հայագիտական բնույթի աշխատանքների),

գ) մշակույթի և սպորտի բնագավառի դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձանց, ովքեր ունեն դոցենտի կոչում՝ արվեստագիտության բնագավառում՝ համաձայն սույն կարգի 6.1 կետի «ա» և «բ» ենթակետերի, ստեղծագործական և կերպարվեստի ու ճարտարապետության բնագավառներում՝ անձինք, ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 10 տարվա ստաժ, վերջին 5 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում զբաղվել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեությամբ և (կամ)՝ ունեն Հայաստանի Հանրապետության և այլ երկրների (համապատասխան պայմանագրի կամ համաձայնագրի առկայության դեպքում) պատվավոր կոչումներ, միջազգային ցուցահանդեսների մասնակիցներ են և ունեցել են անհատական ցուցահանդեսներ, միջազգային մրցույթների մասնակիցներ են և ունեցել են տարբեր ծրագրերով մենահամերգներ կամ մասնակցել են բեմադրությունների, հանրապետական և միջազգային փառատոների, մրցույթների

հաղթողներ, պետական մրցանակակիրներ են, հեղինակ են միջազգային մրցույթներում հաղթած ստեղծագործությունների, նախագծերի, կառույցների, ղեկավարել են միջազգային փառատոների, մրցույթների հաղթողների (գեղարվեստական խմբեր, համույթներ), ունեն հրատարակված կամ համապատասխան բուհի գիտական խորհրդի կողմից երաշխավորված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական շխատանքներ (այդ թվում՝ առանց համահեղինակների), ընդ որում, առնվազն 3 աշխատանք՝ վերջին 5 տարվա ընթացքում, սպորտի բնագավառում՝ անձինք, ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 15 տարվա ստաժ, վերջին 5 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում զբաղվել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեությամբ և (կամ)՝ ունեն Հայաստանի Հանրապետության և այլ երկրների (տվյալ երկրի հետ համապատասխան պայմանագրի կամ համաձայնագրի առկայության դեպքում) պատվավոր կոչումներ, միջազգային մրցումների հաղթողներ են կամ պատրաստել են սաներ, ովքեր օլիմպիական խաղերի, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների մեդալակիրներ են, ունեն հրատարակված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանքներ (այդ թվում՝ առանց համահեղինակների), ընդ որում, առնվազն 3 աշխատանք՝ վերջին 5 տարվա ընթացքում:

7. Պրոֆեսորի պաշտոնի համար սահմանվում են ուսումնական, գիտահետազոտական և կազմակերպչական գործունեության հետևյալ ձևերը.

- ա) դասախոսությունների վարում բակլավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերով,
- բ) ասպիրանտների և հայցորդների ղեկավարում,
- գ) գիտական (գիտամեթոդական) սեմինարների վարում,
- դ) մագիստրոսական ծրագրի ղեկավարում,
- ե) մագիստրոսական ծրագրի գիտական սեմինարի ղեկավարում,
- զ) կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի ղեկավարում,
- է) ուսանողների խորհրդատվությունների անցկացում,
- ը) մասնակցություն ամփոփիչ աստեսավորման հանձնաժողովների աշխատանքներին,
- թ) քննությունների և ստուգաքննությունների անցկացում,
- ժ) դասալսումների անցկացում,

- ժա) անդամակցություն ֆակուլտետի մեթոդական խորհրդին,
- ժբ) մասնակցություն ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքներին,
- ժգ) գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության իրականացում (ԵՊՀ ԻՄ-ում գործող որակավորման բարձրացման ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան):

8. Պրոֆեսորադասախոսական համակազմի սահմանված տարակարգերին առըթեր ԵՊՀ ԻՄ-ում կարող են գործել նաև պրոֆեսորադասախոսական հատուկ տարակարգեր (ամբիոնի պաշտոնային դրույքների հաշվին)։

-խորհրդատու պրոֆեսոր (դոցենտ) ՀՀ կամ արտասահմանյան բուհերից, հետազոտական գիտաարտադրական կազմակերպություններից հրավիրված և ԵՊՀ ԻՄ-ում մասնակի կամ լրիվ դրույքով, ինչպես նաև մասնագիտական ծառայություն մատուցելու կարգավիճակով:

9. Դոցենտի թափուր պաշտոնին կարող են հավակնել պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք, արվեստի մասնագիտության գծով՝ ՀՀ նկարիչների միության անդամները կամ ՀՀ դիզայներների միության անդամները, ովքեր ունեն 15 տարվա գիտամանկավարժական աշխատանքի փորձ և մասնակցել են ՀՀ նկարիչների միության կողմից կազմակերպված ցուցահանդեսներին:

9.1 Դոցենտի թափուր պաշտոնին կարող են հավակնել նաև.

ա) գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցող անձինք, ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 2 տարվա ստաժ և վերջին 2 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն,

բ) գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձինք, ովքեր գիտական կոչում շնորհող բուհում ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 5 տարվա ստաժ, վերջին 3 տարվա ընթացքում այդ բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում ունեն առնվազն 2 հրատարակված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք,

զ) դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձինք, ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 14 տարվա ստաժ, այդ թվում՝ գիտական կոչում շնորհող բուհում՝ առնվազն 5 տարվա, վերջին 3 տարվա ընթացքում այդ բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և ունեն մենագրություն կամ ՀՀ կրթության և գիտության նախարարության (այսուհետև՝ նախարարություն) կողմից երաշխավորված՝ հրատարակված դասագիրք՝ առանց համահեղինակների, և (կամ) դասագրքեր՝ համահեղինակներով, ու տվյալ բնագավառում՝ առնվազն 10 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք, որոնցից առնվազն 2-ը հրատարակվել են վերջին 3 տարվա ընթացքում,

դ) մշակույթի և սպորտի ասպարեզում դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձինք հետևյալ կարգով՝ արվեստագիտության բնագավառում՝ համաձայն սույն կարգի 9.1 կետի «ա», «բ» և «գ» ենթակետերի, ստեղծագործական և կերպարվեստի ու ճարտարապետության բնագավառներում՝ անձինք, ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 6 տարվա ստաժ, վերջին 3 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և (կամ)՝ ունեն Հայաստանի Հանրապետության և այլ երկրների (համապատասխան պայմանագրի կամ համաձայնագրի առկայության դեպքում) պատվավոր կոչումներ, հանրապետական կամ միջազգային ցուցահանդեսների մասնակիցներ են, հանրապետական փառատոների, մրցույթների հաղթողներ, պետական մրցանակակիրներ են, հեղինակ են առնվազն 3 բեմադրության, ստեղծագործական աշխատանքի, տեսագրության, կառույցի, նախագծի, հանրապետական կամ միջազգային մրցույթներում մրցանակ ստացած առնվազն 1 ստեղծագործության, ղեկավարել են հանրապետական կամ միջազգային փառատոների, մրցույթների, դափնեկիրների (գեղարվեստական խմբեր, համույթներ), ունեն հրատարակված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանքներ (այդ թվում՝ առանց համահեղինակների), ընդ որում, առնվազն 2 աշխատանք՝ վերջին 3 տարվա ընթացքում, սպորտի բնագավառում՝ ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 10 տարվա ստաժ, վերջին 2 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական

գործունեություն և (կամ)՝ ունեն չայաստանի շանրապետության և այլ երկրների (համապատասխան պայմանագրի կամ համաձայնագրի առկայության դեպքում) պատվավոր կոչումներ, հանրապետական կամ միջազգային մրցումների մրցանակակիրներ են, պատրաստել են սաներ, ովքեր մասնակցել են օլիմպիական խաղերի, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների, ունեն հրատարակված կամ համապատասխան բուհի գիտական խորհրդի կողմից երաշխավորված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանքներ (այդ թվում՝ առանց համահեղինակների), ընդ որում առնվազն 2 աշխատանք՝ վերջին 3 տարվա ընթացքում:

10. Դոցենտի պաշտոնի համար սահմանվում են ուսումնական, գիտահետազոտական և կազմակերպչական գործունեության հետևյալ ձևերը.

ա) դասախոսությունների վարում բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերով,

բ) ասպիրանտների և հայցորդների ղեկավարում,

գ) մագիստրոսական ծրագրի ղեկավարում,

դ) մագիստրոսական ծրագրի գիտական սեմինարի ղեկավարում,

ե) գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքների վարում,

զ) կուրսային և ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի ղեկավարում,

է) ուսանողների խորհրդատվությունների անցկացում,

ը)մասնակցություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների աշխատանքներին,

թ) քննությունների և ստուգարքների անցկացում,

ժ) ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաների ղեկավարում,

ժա) անդամակցություն ֆակուլտետի մեթոդական խորհրդին,

ժբ) կուրատորական աշխատանքի կատարում,

ժգ) մասնակցություն ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքներին,

ժդ) գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության իրականացում (ԵՊՀ ԻՄ-ում գործող որակավորման բարձրացման ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան):

11. Ասիստենտի թափուր պաշտոնին կարող են հավակնել գիտական աստիճան ունեցող կամ համապատասխան մասնագիտության գծով ասպիրանտուրան ավարտած անձինք, արվեստի մասնագիտության գծով՝ 10 տարվա գիտամանկավարժական աշխատանքի փորձ ունեցող ՀՀ նկարիչների կամ դիզայներների միության անդամներ, որոնք ունեցել են անհատական ցուցահանդեսներ:

Ասիստենտի թափուր պաշտոնին կարող են հավակնել նաև

ա) դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձինք, ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 10 տարվա ստաժ, այդ թվում՝ գիտական կոչում շնորհող բուհում՝ առնվազն 3 տարվա, վերջին 2 տարվա ընթացքում այդ բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և ունեն մենագրություն կամ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված՝ հրատարակված դասագիրք, ու տվյալ բնագավառում՝ առնվազն 5 գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանք,

բ) մշակույթի և սպորտի ասպարեզում դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձինք հետևյալ կարգով՝ արվեստագիտության բնագավառում՝ համաձայն սույն կարգի 11 կետի «ա» և «բ» ենթակետերի, ստեղծագործական և կերպարվեստի ու ճարտարապետության բնագավառներում՝ անձինք, ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 4 տարվա ստաժ, վերջին 2 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և (կամ)՝ ունեն Հայաստանի Հանրապետության և այլ երկրների (համապատասխան պայմանագրի կամ համաձայնագրի առկայության դեպքում) պատվավոր կոչումներ, հանրապետական կամ միջազգային ցուցահանդեսների մասնակիցներ են, հանրապետական փառատոների, մրցույթների հաղթողներ, պետական մրցանակակիրներ են, հեղինակ են առնվազն 2 բեմադրության, ստեղծագործական աշխատանքի, տեսագրության, կառույցի, նախագծի, հանրապետական կամ միջազգային մրցույթներում մրցանակ ստացած առնվազն 1 ստեղծագործության, ղեկավարել են հանրապետական կամ միջազգային փառատոների, մրցույթների, դափնեկիրների (գեղարվեստական խմբեր, համույթներ), ունեն հրատարակված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանքներ, ընդ որում, առնվազն 1

աշխատանք՝ վերջին 3 տարվա ընթացքում, սպորտի բնագավառում՝ ովքեր ունեն գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 7 տարվա ստաժ, վերջին 2 տարվա ընթացքում գիտական կոչում շնորհող բուհում իրականացրել են մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն և (կամ)՝ ունեն Հայաստանի Հանրապետության և այլ երկրների (համապատասխան պայմանագրի կամ համաձայնագրի առկայության դեպքում) պատվավոր կոչումներ, հանրապետական կամ միջազգային մրցումների մրցանակակիրներ են, պատրաստել են սաներ, ովքեր մասնակցել են օլիմպիական խաղերի, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների, ունեն հրատարակված կամ համապատասխան բուհի գիտական խորհրդի կողմից երաշխավորված գիտական (գիտամեթոդական) և ուսումնամեթոդական աշխատանքներ, ընդ որում առնվազն 1 աշխատանք՝ վերջին 3 տարվա ընթացքում:

12. Ասիստենտի պաշտոնի համար սահմանվում են ուսումնական, գիտահետազոտական և կազմակերպչական գործունեության հետևյալ ձևերը.

- ա) դասախոսությունների վարում բակալավրի պատրաստման կրթական ծրագրով,
- բ) գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքների վարում,
- գ) կուրսային և ավարտական աշխատանքների ղեկավարում,
- դ) ուսանողների խորհրդատվությունների անցկացում,
- ե) քննությունների և ստուգարքների անցկացում,
- զ) ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաների ղեկավարում,
- է) կուրատորական աշխատանքի կատարում,
- ը) մասնակցություն ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքներին,
- թ) գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության իրականացում (ԵՊՀ ԻՄ-ում գործող որակավորման բարձրացման ծրագրի նվազագույն պահանջ-ներին համապատասխան):

13. Արվեստի մասնագիտության գծով պրոֆեսորի, դոցենտի և ասիստենտի պաշտոնները զբաղեցնելու համար մյուս բոլոր չափանիշներին համապատասխանելու դեպքում, գիտական աստիճանի առկայությունը պարտադիր չէ:

14. Դասախոսի թափուր պաշտոնին կարող են հավակնել համապատասխան մասնագիտության գծով մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք:

15. Դասախոսի պաշտոնի համար սահմանվում են ուսումնական, գիտահետազոտական և կազմակերպչական գործունեության հետևյալ ձևերը.

ա) գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքների վարում,

բ) կուրսային աշխատանքների ղեկավարում,

գ) ուսանողների խորհրդատվությունների անցկացում,

դ) քննությունների և ստուգարքների անցկացում,

ե) ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաների ղեկավարում,

զ) կուրատորական աշխատանքի կատարում,

է) մասնակցություն ամբիոնի ուսումնամեթոդական աշխատանքներին,

ը) գիտահետազոտական և ուսումնամեթոդական գործունեության իրականացում (ԵՊՀ ԻՄ-ում գործող որակավորման բարձրացման ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան):

15.1 Դասախոսի տարակարգով աշխատող մասնագետին համապատասխան ամբիոնի և ֆակուլտետի երաշխավորությամբ և տնօրենի համաձայնությամբ կարող է թույլատրվել դասախոսությունների վարում բակալավրի պատրաստման կրթական ծրագրով:

III. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ

ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

16. Պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների մրցույթների նախապատրաստման և կազմակերպման ընդհանուր վերահսկողության նպատակով ԵՊՀ ԻՄ-ում գործում է որակավորման մանդատային հանձնաժողով: Հանձնաժողովն ունենում է նախագահ և քարտուղար:

Հանձնաժողովի կազմում, որը հաստատվում է տնօրենի հրամանով, ի թիվս այլ անդամների, ընդգրկվում են ԵՊՀ ԻՄ-ի մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի վարիչը, ԵՊՀ ԻՄ-ի ուսումնամեթոդական վարչության պետը, ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի

քարտուղարը, ԵՊՀ ԻՄ-ի արհիբյուրոյի նախագահը, իրավախորհրդատուն, ԵՊՀ ԻՄ-ի մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի մասնագետը (քարտուղար) :

17. Յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին ԵՊՀ ԻՄ-ի մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը պարտավոր է ուսումնասիրել և որակավորման մանդատային հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել հաջորդ ուսումնական կիսամյակում պրոֆեսորադասախոսական համակազմի թափուր մրցութային պաշտոնների ցանկը: Վերջինս քննարկում և տնօրենին է ներկայացնում հաջորդ ուսումնական կիսամյակում պրոֆեսորադասախոսական համակազմի թափուր մրցութային պաշտոնների վերջնական ցանկը:

18. Պաշտոնների տեղակալման համար մրցույթները հայտարարվում են որակավորման մանդատային հանձնաժողովի առաջարկությամբ, տնօրենի հրամանով՝ ընթացիկ ուսումնական կիսամյակի վերջում:

Մրցույթի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվում է ԵՊՀ ԻՄ-ի ինտերնետային կայքում: Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները, փաստաթղթերի ներկայացման վայրն ու վերջնաժամկետը:

Մրցույթին մասնակցելու փաստաթղթերն ընդունվում են հայտարարության օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում:

19. Մրցույթի մասնակիցները, մրցույթի վերաբերյալ հայտարարության օրվանից՝ մեկամսյա ժամկետում ներկայացնում են դիմում՝ տնօրենի անունով, կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն, բարձրագույն կրթության վկայականի (դիպլոմի), գիտական աստիճանի դիպլոմի, գիտական կոչման վկայականի պատճենները, հրատարակված գիտական աշխատությունների և գյուտերի ցանկը, որակավորման բարձրացում անցնելու մասին վկայականը (առկայության դեպքում):

Մրցույթի մասնակիցը կարող է ներկայացնել նաև գիտամանկավարժական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր:

20. Մրցույթի մասնակիցների փաստաթղթերը որակավորման մանդատային հանձնաժողովի կողմից ուսումնասիրվում են և հանձնաժողովի եզրակացությամբ ներկայաց-

վում են տնօրենին, ում մակագրությամբ փաստաթղթերն ուղարկում են համապատասխան ամբիոնի քննարկմանը:

Դիմումները հանձնաժողովի կողմից ենթակա են մերժման, եթե հավակնորդի տվյալները չեն բավարարում մրցույթի պայմաններին, կամ չի պահպանվել դիմումի ներկայացման ժամկետը:

21. Տնօրենը, որակավորման մանդատային հանձնաժողովը, ֆակուլտետի ղեկանը կամ ամբիոնի վարիչն իրավունք ունեն մրցույթի մասնակցին հանձնարարել փորձնական դասախոսություն, սեմինար կամ գործնական պարապմունքներ: Դասախոսության թեման հանձնարարվում է ամբիոնի կողմից՝ ուսումնական պլանի շրջանակներում:

22. Ամբիոնի նիստում հավակնորդների փաստաթղթերի քննարկման արդյունքում, բաց քվեարկությամբ (եթե այլ որոշում չի կայացվել) ընդունվում է կարծիք, որը ներկայացվում է ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհրդին կից մրցույթային հանձնաժողովին:

23. Մրցութային հանձնաժողովն ուսումնասիրում է մրցույթի մասնակիցների փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ տալիս է գրավոր կարծիք: Գրավոր կարծիքում նշվում են.

- պաշտոնի հավակնորդի մասնագիտական բնութագիրը և գիտական որակավորումը,
- մանկավարժական գործունեության գնահատականը,
- առաջարկվող պաշտոնում հավակնորդի առաջադրման հիմնավորումը,
- ամբիոնի նիստում կազմակերպված քվեարկության արդյունքները:

24. Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների մրցույթներն անցկացվում են ֆակուլտետի գիտական խորհրդում:

Մրցութով ընտրված պրոֆեսորները և դոցենտները հաստատվում են ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում՝ սահմանված կարգով:

Առանձին դեպքերում (համապատասխան հիմնավորմամբ), տնօրենի որոշմամբ պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնների համար հայտարարված մրցույթները կարող են անցկացվել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում:

25. Գիտական խորհրդի նիստին պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնի թեկնածուի ներկայությունը, որպես կանոն պարտադիր է: Թեկնածուի բացակայության դեպքում գիտական խորհուրդը որոշում է կայացնում թեկնածությունը քննարկելու կամ

քննարկումից հանելու մասին:

Քննարկման ընթացքում գիտական խորհրդի անդամներն իրավունք ունեն հարցեր տալու պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոնի հավակնորդին:

26. Փակ, գաղտնի քվեարկության համար մրցույթի բոլոր մասնակիցների անուն, ազգանունները գրանցվում են քվեաթերթիկում:

27. Նախագահի առաջարկով՝ փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով գիտական խորհրդի անդամներից ընտրվում է հաշվիչ հանձնաժողով երեք հոգուց ոչ պակաս կենտ թվով անդամներով: Թեկնածուները չեն կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ:

Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

28. Մեկ թեկնածուի դեպքում քվեաթերթիկի մեջ պետք է նշվի թեկնածուի ազգանունը, անունը, «կողմ» և «դեմ» բառերը (Հավելված 1): Մեկից ավելի թեկնածուների քվեարկության համար քվեաթերթիկի մեջ այբբենական կարգով պետք է նշվեն թեկնածուների ազգանունը, անունը և վերջին տողում «բոլորին դեմ եմ» արտահայտությունը (Հավելված 2):

29. Վավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում՝

ա) թողնված է «կողմ» և «դեմ» բառը (միակ թեկնածուի քվեարկության դեպքում),

բ) քվեարկված է միայն մեկ թեկնածուի օգտին կամ «բոլորին դեմ եմ»-ի օգտին (մեկից ավելի թեկնածուների քվեարկության դեպքում): Որևէ թեկնածուի օգտին կամ «բոլորին դեմ եմ» օգտին քվեարկելու համար համապատասխան տողի վանդակում կատարվում է նշում:

Մնացած դեպքերում, ինչպես նաև քվեաթերթիկում չսահմանված նշումների, ընդգծումների և այլ նշանների առկայության դեպքում քվեաթերթիկը համարվում է անվավեր:

Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը, ձայների պարզ մեծամասնությամբ: Եթե քվեաթերթիկն անվավեր ճանաչելն ազդում է ընտրությունների արդյունքների վրա, ապա այդ հարցի կապակցությամբ հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը քննարկում է գիտական խորհուրդի կողմից և կայացնում է համապատասխան որոշում:

30. Քվեարկությունն ավարտվելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում հաշվիչ հանձնաժողովի նիստի արձանագրություն (Հավելված 3):

31. Գիտական խորհրդի նիստն իրավագոր է, եթե խորհրդի նիստին ներկա է գիտական խորհրդի անդամների 2/3-ը:

Ընտրված է համարվում այն թեկնածուն (թեկնածուները), ով (ովքեր) ստացել է առավելագույն թվով ձայներ, բայց ոչ պակաս քան գիտական խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների 50 տոկոսը:

Եթե թեկնածուների քանակն ավելին է մրցութային տեղերի քանակից, ապա թեկնածուներից որևէ մեկի՝ գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը չստանալու կամ հավասար ձայներ ստանալու դեպքերում, նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են առավելագույն ձայներ ստացած 2 (հավասար ձայների դեպքում 2-ից ավելի) թեկնածուները:

Կրկնակի քվեարկությունը կազմակերպվում է սույն ընթացակարգին համապատասխան:

32. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները, որոնց հիման վրա ֆակուլտետի (ԵՊՀ ԻՄ) գիտական խորհուրդը ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

- ա) պաշտոնում ընտրվելու մասին,
- բ) կրկնակի քվեարկություն անցկացնելու մասին,
- գ) ընտրությունները չկայացած ճանաչելու մասին,
- դ) ընտրություններն անվավեր ճանաչելու մասին:

Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը հաստատվում է գիտական խորհրդի կողմից, բաց քվեարկությամբ և կցվում է մրցութային փաստաթղթերին:

33. Գիտական խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել տնօրենին՝ եռօրյա ժամկետում:

34. Տնօրենն իրավասու է բեկանելու գիտական խորհրդի որոշումը, եթե բացահայտվել են սույն կանոնակարգի էական խախտումներ, որոնք ազդել են ընտրության վերջնական արդյունքների վրա:

IV. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ

ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

35. Մրցույթով ընտրված թեկնածուի հետ տնօրենը տվյալ պաշտոնի համար նախատեսված ժամկետով կնքում է աշխատանքային պայմանագիր, գիտական խորհրդի որոշման ընդունումից հետո յոթօրյա ժամկետում:

Պրոֆեսորադասախոսական համակազմի պաշտոններում աշխատանքային պայմանագրերը կնքվում են. առաջին անգամ ընտրվելու դեպքում՝ մինչև 3 տարի, այնուհետև՝ 3-5 տարի ժամկետով:

Աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետն առաջարկում է որակավորման մանդատային հանձնաժողովը, հիմք ընդունելով թեկնածուի՝ սույն ընթացակարգի 5-րդ կետում պաշտոնի հավակնորդի համար սահմանված չափանիշներին համապատասխանության գնահատման արդյունքները:

36. Ժամավճարային հիմունքներով կամ ոչ լրիվ դրույքաչափով դասավանդողների դեպքում, մրցութային ընտրություն չի անցկացվում և նրանք հրամանագրվում են տնօրենի կողմից մինչև 1 տարի ժամկետով:

37. Առանձնահատուկ դեպքերում (ուսումնական բեռնվածության և հաստիքների թվաքանակի աճի, որոշակի անձի առողջական վիճակի կամ այլ պատճառներով գիտամանկավարժական գործունեության վաղաժամկետ դադարեցման) պրոֆեսորադասախոսական համակազմի թափուր պաշտոնում կարող է նշանակում կատարվել առանց մրցութային ընտրության՝ տնօրենի հրամանով մինչև 1 տարի ժամկետով:

38. Աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո, գիտամանկավարժական գործունեության արդյունքների գնահատման հիման վրա և ամբիոնում համապատասխան հաստիքի առկայության դեպքում, տնօրենն իրավասու է պրոֆեսորադասախոսական համակազմի աշխատողի հետ մեկ անգամ կնքել նոր աշխատանքային պայմանագիր՝ մինչև 5 տարի ժամկետով, առանց մրցութային ընտրության:

Այս դեպքում, պայմանագրի ժամկետը լրանալուց առնվազն երկու ամիս առաջ տվյալ պաշտոնը զբաղեցնող անձը՝ սահմանված կարգով ֆակուլտետի գիտական խորհրդին է ներկայացնում հաշվետվություն նախորդ ժամկետում իր կողմից իրականացված գիտամանկավարժական գործունեության վերաբերյալ:

Ֆակուլտետի գիտական խորհուրդը, քննարկելով թեկնածուի գիտամանկավարժական գործունեության վերաբերյալ ներկայացված հաշվետվությունը, ընդունում է համապատասխան որոշում, որը կից փաստաթղթերով ուղարկում է որակավորման մանդատային հանձնաժողովին:

Որակավորման մանդատային հանձնաժողովը, ուսումնասիրելով ներկայացված հաշվետվությունը և ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը, առաջարկություն է ներկայացնում տնօրենին տվյալ անձին առանց մրցութային ընտրության որոշակի ժամկետով հրամանագրելու վերաբերյալ:

39. Տնօրենը և ֆակուլտետի ղեկանը իրավասու են ֆակուլտետի գիտական խորհրդին ներկայացնելու պրոֆեսորադասախոսական համակազմի ներկայացուցչի զբաղեցրած պաշտոնին համապատասխանության հարցը:

Եթե գիտական խորհուրդը փակ, գաղտնի քվեարկությամբ հաստատում է զբաղեցրած պաշտոնին տվյալ անձի անհամապատասխանությունը, ապա տնօրենը խորհրդի որոշումն ընդունելուց հետո սահմանված կարգով լուծում է նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

Զբաղեցրած պաշտոններին համապատասխանության մասին գիտական խորհրդի որոշմանը նախորդում է պրոֆեսորադասախոսական համակազմի ներկայացուցչի աշխատանքային գործունեության ստուգումը ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներից կազմված հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի կազմը հաստատում է տնօրենը:

V. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

40. Սույն կարգի դրույթները տարածվում են 2012թ. սեպտեմբերի 1-ից հետո պրոֆեսորադասախոսական համակազմի թափուր պաշտոնների համար հայտարարվող մրցույթների վրա:

41. Մինչև սույն կարգի ընդունումը մրցութային ընտրությամբ ընտրված պրոֆեսորադասախոսական համակազմի անդամները շարունակում են պաշտոնավարել մինչև սահմանված ժամկետի ավարտը:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի
 ֆակուլտետի գիտական խորհրդի _____ նիստում _____ պաշտոնի
 փակ, գաղտնի քվեարկության

Հ/Հ	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	ԿՈՂՄ	ԴԵՄ

«Կողմ» կամ «Դեմ» լինելու դեպքում քվեաթերթիկի համապատասխան վանդակում
 կատարվում է V նշումը:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ
 ֆակուլտետի գիտական խորհրդի _____ նիստում _____ պաշտոնի
 գաղտնի քվեարկության

Հ/Հ	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆՇՈՒՄԸ
1.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
2.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
3.	ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
4.	ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ	

Որևէ թեկնածուի «կողմ» լինելու կամ «բոլորին դեմ» լինելու դեպքում, քվեաթերթիկի
 համապատասխան վանդակում կատարվում է V նշումը:

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Հաշվիչ հանձնաժողովի նիստի

ք. Իջևան

«_____» _____ 20 թ.

Հաշվիչ հանձնաժողովն ընտրվել է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի
_____ ֆակուլտետի գիտական խորհրդի _____ նիստում
հետևյալ կազմով.

1. _____
2. _____
3. _____

Ֆակուլտետի գիտական խորհրդի _____ անդամներից ներկա էին _____ -ը:

Քվեարկվել է (են) _____ ֆակուլտետի _____

ամբիոնի _____ պաշտոնի թեկնածությունը (ները):

Քվեարկությանը մասնակցել են ֆակուլտետի գիտական խորհրդի _____ անդամներ:

Բաժանվել է _____ քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է _____ քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են.

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ ԿՈՂՄ, ԴԵՄ, ԱՆՎԱՎԵՐ,

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ ԿՈՂՄ, ԴԵՄ, ԱՆՎԱՎԵՐ,

Անվավեր քվեաթերթիկների քանակը _____:

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով _____

ընտրվել է (չի ընտրվել) _____ ֆակուլտետի _____ ամբիոնի
_____ պաշտոնում:

Կամ՝

Փակ, գաղտնի քվեարկության արդյունքներով _____ ֆակուլտետի
_____ ամբիոնի _____ ի պաշտոնի թեկնածուներից ոչ
մեկը չի ընտրվում _____ ի պաշտոնում, իսկ ներքոհիշյալ թեկնածուները՝

1. _____
2. _____
3. _____

մասնակցում են կրկնակի քվեարկությանը:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ _____